ԶԼՄ էթիկայի դիտորդ մարմնի եզրակացությունը «168 ժամ» թերթի 2009 թվականի մարտի 19-ի համարի «Հաճախորդը միշտ ճիշտ է» եւ «Քաղաքացի, ֆլոմասՏԵ՞Ր ես» հրապարակումների վերաբերյալ

2009 թվականի մարտի 30-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին է դիմել «Ժառանգություն» կուսակցության մամուլի խոսնակ Հովսեփ Խուրշուդյանը՝ ընդդեմ «168 ժամ» թերթի 2009 թվականի մարտի 19-ի համարի «Հաճախորդը միշտ ճիշտ է» եւ «Քաղաքացի, ֆլոմասՏԵ՞Ր ես» հրապարակումների:

Սույն եզրակացությունը պարզաբանում է հիշյալ հրապարակման համապատասխանությունը Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի 35 լրատվամիջոցների ստորագրած Վարքականոնին:

Քննարկելով «168 ժամ» թերթի 2009 թվականի մարտի 19-ի համարի «Հաճախորդը միշտ ճիշտ է» եւ «Քաղաքացի, ֆլոմասՏԵ՞Ր ես» հրապարակումների համապատասխանությունը ԶԼՄ-ների Վարքականոնին, Դիտորդ մարմինը արձանագրում է հետեւյալը.

Ա) Այն, ինչ բողոքողը նշել է իբրեւ վիրավորական («Հաճախորդը միշտ ճիշտ է» վերնագիրը), ընդամենը հեղինակի գնահատող դատողություն է, ինչի ճշմարտացիությունը կամ իրականությանը համապատասխանությունն ապացուցելի չէ: Այդ մասին նշված է նաեւ Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի՝ «Լինգենսն ընդդեմ Ավստրիայի» գործով վճռի 46-րդ կետում. «Դատարանի կարծիքով անհրաժեշտ է տարբերակում դնել փաստերի եւ գնահատող դատողությունների միջեւ: Եթե փաստերի հավաստիությունը կարելի է ապացուցել, ապա գնահատող դատողությունների ճշմարտացիությունն անապացուցելի է» (European Court of Human Rights, CASE OF LINGENS v. AUSTRIA, 08. 07.1986, Application No: 9815/82, Publication: A 103): Այս ձեւակերպումը Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանը հետագայում եւս մի քանի անգամ օգտագործել է Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտման առնչությամբ քննված նմանատիպ այլ գործերի վճիռներում:

Բ) Վիճարկվում է «Քաղաքացի, ֆլոմասՏԵ՞Ր ես» հոդվածի՝ «Ժառանգություն» կուսակցության որոշումը՝ Երեւանի քաղաքապետի ընտրություններին առանձին ցուցակով մասնակցելու վերաբերյալ, ըստ էության՝ ՀՀԿ-ի համար ամենեւին էլ անակնկալ չէր» նախադասության մեջ առկա, բողոքողի կարծիքով, սուտ տեղեկատվությունը: Դիտորդ մարմինը կարծում է, որ լրագրողն իրավունք ուներ ենթադրելու, որ «Ժառանգությունը» կգնա ընտրությունների առանձին ցուցակով՝ քանի դեռ որեւէ այլ որոշում, բացի ՀԱԿ-ին չմիանալուց, չէր կայացվել: Բացի այս, թերթն իր այս տեղեկությունն ըստ էության հերքել է՝ մարտի 24-ի համարում տեղեկացնելով ընտրություններին չմասնակցելու վերաբերյալ «Ժառանգություն» կուսակցության մարտի 22-ի որոշման մասին:

Գ) Բողոքողը ապատեղեկատվություն է որակում նույն հոդվածի «Այսինքն, ըստ մեր աղբյուրների՝ «Ժառանգության» այդ նիստն իրականում բլեֆ է եղել, քանի որ նրանք արդեն վաղուց որոշած են եղել, որ չեն միանալու ՀԱԿ-ին» նախադասությունը: Դիտորդ մարմինը համարում է, որ լրագրողն իրավունք ուներ հղում կատարելու անանուն աղբյուրներին (Վարքականոնի 2.2 կետ) եւ կատարելու իր գնահատող դատողությունը՝ հիմնվելով վերոհիշյալին հաջորդող նախադասության վրա. «Երեկ ԱԺ-ում շատերը հենց դրանով էին նաեւ բացատրում երեքշաբթի օրն ԱԺ

հայտարարությունների ժամանակ ՀՀԿ պատգամավորների շնորհավորանքներն ու գովեստի խոսքերը «Ժառանգությանը»՝ նման որոշում ընդունելու համար»:

Դ) Վիճարկվում են նաեւ հետեւյալ նախադասությունները. «Եվ հիմա արդեն իշխանության ներսում այլ սցենար է պատրաստվում մայիսի 31-ին կայանալիք Երեւանի քաղաքապետի ընտրությունների համար: «Ժառանգության» շնորհիվ, որն, ըստ ՀՀԿ-ական պատգամավորների՝ իր վերջին որոշման արդյունքում դարձավ թվանկարչության հրաշալի գործիք: Կամ «Ֆլոմաստեր»: Սա նույնպես եզրակացություն է եւ ենթակա չէ ապացուցման:

Այսպիսով՝ Դիտորդ մարմինը համարում է, որ «168 ժամ» թերթի մարտի 19-ի համարի՝ վիճարկվող երկու հրապարակումներում էլ Վարքականոնի եւ մասնագիտական էթիկայի միջազգայնորեն ընդունված կանոնների խախտումներ չկան:

Ընդունվել է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի
2009 թվականի մայիսի12-ի նիստում